ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

_02_ հոկտեմբերի 2018թ. N _116_

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Գետաշեն համայնքի ավագանու՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 9 նիստի որոշումները:

Առդիր 6 էջ:

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.16/12280-18
04 10 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

24 սեպտեմբերի 2018թ. N 35

## ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Ավագանու անդամներ՝**

| | Կողմ ( ) | Դեմ ( ) | Ձեռնպահ ( ) |
|---|---|---|---|
| Վ.Խաչատրյան | | | |
| Հ. Դավթյան | | | |
| Պավ.Հովակիմյան | | | |
| Մ.Մուրադյան | | | |
| Մն.Մուրադյան | | | |

մ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. Հովհաննիսյան**

2018 թվականի 24 սեպտեմբերի
Գ.Գետաշեն
Ժամը 11:30

Հավելված

Գետաշեն համայնքի ավագանու

24.09. 2018. N 35 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

35. Ավագանու N 9 նիստի օրակարգի հաստատելու մասին (Զեկ. աշխատակազմի քարտուղար Իսահակյան Վ.)

36 - Ն. Գետաշեն համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Գետաշեն համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասի: (Զեկ. համայնքի ղեկավար ՝ Հովհաննիսյան Գ.)

37. Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տարածքի աճուրդ-վաճառք անցկացնելու մասին: (Զեկ. համայնքի ղեկավար ՝ Հովհաննիսյան Գ.)

38. Գետաշեն համայնքի որոշ ընտանիքների սոցօգնություն տրամադրելու մասին: (Զեկ. համայնքի ղեկավար ՝ Հովհաննիսյան Գ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

24 սեպտեմբերի 2018 թ. N 36-Ն

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվային ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գետաշեն համայնքի 2017 թ. դեկտեմբերի 20-ի «Գետաշեն համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

*ա) Եկամտային մասը փոփոխել հետևյալ կերպ*

1) համայնքի սեփականություն համարվող հողի վարձակալությունից եկամուտները նվազեցնել 130.0 (մեկ հարյուր երեսուն հազար) դրամով,

2) այլ գույքի վարձակալությունից մուտքերը ավելացնել 184.0 (մեկ հարյուր ութսունչորս հազար) դրամով:

բ) *Ծախսային մասը փոփոխել հետևյալ կերպ՝*

1) 01-1-1 նախահաշվի

4111 հոդվածը նվազեցնել 420.0 (չորս հարյուր քսան հազար) դրամով,

4263 հոդվածը նվազեցնել 246.0 (երկու հարյուր քառասունվեց հազար) դրամով,

4823 հոդվածը ավելացնել 300.0 (երեք հարյուր հազար) դրամով,

2) 01-6-1 նախահաշվի

4111 հոդվածը ավելացնել 420.0 (չորս հարյուր քսան հազար) դրամով,

3)04-3-2 նախահաշվի

5112 հոդվածը նվազեցնել 920.0 (ինը հարյուր քսան հազար) դրամով,

4)06-3-1 նախահաշվի

5134 հոդվածը ավելացնել 920.0 (ինը հարյուր քսան հազար) դրամով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Ավագանու անդամներ՝*

| | *Կողմ ( )* | *Դեմ ( )* | *Ձեռնպահ ( )* |
|---|---|---|---|
| *Վ.Խաչատրյան* | | | |
| *Հ. Դավթյան* | | | |
| *Պ. Հովակիմյան* | | | |
| *Մ. Մուրադյան* | | | |
| *Մն. Մուրադյան* | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Հովհաննիսյան

2018 թվականի 24 սեպտեմբերի

Գ.Գետաշեն

Ժամը 11:30

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ*

---

*24 սեպտեմբերի 2018թ.* **N 37**

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ Գետաշեն, 4-րդ փողոց, շենք 1, թիվ 3 բնակելի տարածքը դնել աճուրդ-վաճառքի համաձայն հավելվածի:
2. Սահմանել աճուրդի մեկնարկային գինը ըստ լոտի, ծածկագրի և ընդհանրական գնի համաձայն հավելվածի:
3. Տալ հայտարարություն «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և Ֆեյսբուքյան էջում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամներ*

| | *Կողմ ( )* | *Դեմ ( )* | *Ձեռնպահ ( )* |
|---|---|---|---|
| *Վ.Խաչատրյան* | | | |
| *Հ. Դավթյան* | | | |
| *Պ. Հովակիմյան* | | | |
| *Մ. Մուրադյան* | | | |
| *Մն. Մուրադյան* | | | |

*Համայնքի ղեկավար* *Գ. Հովհաննիսյան*

2018 թվականի 24 սեպտեմբերի

Գ.Գետաշեն

Ժամը 11:30

ՀԱՎԵԼՎԱԾ

Գետաշեն համայնքի ավագանու N 37 որոշման,

բնակելի տարածք-անշարժ գույքի աճուրդ – վաճառքի

մեկնարկային գինը ըստ լոտի, ծածկագրի,

ընդհանրական գնի

Լոտ 1, ծածկագիր՝ 009, բնակելի տարածք -119.3 քմ, ընդ. գինը՝ 1.040.000 ( մեկ միլիոն, քառասուն հազար) ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*24 սեպտեմբերի 2018թ.* **N 38**

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ՍՈՑ-ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել համայնքի ղեկավարին Գետաշեն համայնքի ներքոհիշյալ բնակիչներին տալ ֆինանսական օգնություն սոց-օգնության ֆոնդից 50000 (հիսուն հազար)- ական ՀՀ դրամ՝ Բարեղամյան Աշոտ Վաղինակի, Կոստանյան Զորիկ Գևորգի, Ումրումյան Դավիթ Ստեփանի, Պետրոսյան Անահիտ Պետրոսի, Աբգարյան Քրիստինե Դավիթի, Ներսիսյան Իրինա Խաչատուրի, Արթենյան Սըուզաննա Էդվարդի, Բաբայան Աստղիկ Անուշավանի:
Ընդամենը՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| | *Կողմ ( )* | *Դեմ ( )* | *Ձեռնպահ ( )* |
|---|---|---|---|
| *Վ.Խաչատրյան* | | | |
| *Հ. Դավթյան* | | | |
| *Պ. Հովակիմյան* | | | |
| *Մ. Մուրադյան* | | | |
| *Մն. Մուրադյան* | | | |

*Համայնքի ղեկավար՝* *Գ. Հովհաննիսյան*

2018 թվականի 24 սեպտեմբերի
Գ.Գետաշեն
Ժամը 11:30